

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՂԱՆՑԱՆ ԳԵՎՈՐԳ ՎԱԼԵՐԻԿԻ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՏԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական
կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ռ. Ն. Ազարյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ֆ. Գ. Ղազարյան

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր՝ Լ. Ա. Սամվելյան

Առաջատար
կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015 թ ապրիլի 30-ին, ժամը
12⁰⁰-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական
խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրը առաքված է 2015թ. մարտի 30-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա. Հ. Սվաջյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Դպրոցականների ուսուցման և դաստիարակության համակարգի կատարելագործման, ինքնուրույն կյանքի նախապատրաստման ժամանակակից փուլում հատկապես կարևոր նշանակություն է ստանում նրանց ֆիզիկական պատրաստությունը: Վերջինս զինվորական դաստիարակության առաջատար կողմ է հանդիսանում ռազմական գործի կիրառական ուղղվածությամբ: Հետևաբար մինչ զինակոչը դպրոցի պայմաններում նախագորակոչիկներին հարկավոր է նախապատրաստել որպես հայրենասեր մարտիկներ, որոնք ունեն շարժողական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակ: Այս են պահանջում ժամանակակից տեխնիկական և համագորային մարտի վարման պայմանները (В.А.Кабачков 1993, Մ.Վ.Սարգսյան 2004, Ֆ.Գ.Ղազարյան 2008, С.В. Дмитриев 2011, И.П. Залетаев 2014 և այլք):

Ֆիզիկական դաստիարակության ավագ դպրոցի համալիր ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դպրոցականների ռազմահայրենասիրական և ռազմաֆիզիկական շատ խնդիրներ կարող են հաջողությամբ լուծվել ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Սակայն վերոնշյալ ծրագրում բավարար չափով նախատեսված չեն սովորողների ֆիզիկական պատրաստության, այդ թվում նաև ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությանն ուղղված ուսումնական նյութերը: Մինչդեռ այդ հիմնախնդրի շատ հարցեր պահանջում են տեսական և գործնական մշակումներ (Ю.Н.Вавилов 1990, В.И.Лях с соавт 1992, Р.А.Кемза 1997, В.С.Кузнецов, Г.А.Колодницкий 2003, А.Г. Капустин 2012, Л.М.Гришин 2013 և այլք):

Այսպես, նվազագույն արդյունավետությամբ են գործածվում մարմնամարզության միջոցները ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության համակարգում, դպրոցական ծրագրում քիչ են ներառված և գրեթե չեն կիրառվում շարժումների կոորդինացիայի, ճշգրտության և ճարպկության զարգացմանն ուղղված վարժություններն ու հանձնարարություններ: Եվ սա այն դեպքում, երբ հատկապես այդ շարժողական ընդունակություններն ունեն կարևոր նշանակություն ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործում:

Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության համակարգում գրեթե ուշադրություն չի դարձվում նաև մարմնամարզական վարժությունների կիրառական ուղղվածությանը (А.Г.Пономарев 1987, Մ.Ա. Բաբայան 2000, Վ.Ֆ.Գրիգորյան 2006, П.К. Пискунов 2012, М.Л. Дмитриев 2014 և այլք): Ոչ լիարժեք են մշակված դրանց կիրառման միջոցներն ու մեթոդները ավագ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում, ինչը նույնպես դժվարացնում է սովորողների շրջանում ռազմաֆիզիկական

պատրաստության ուղղությամբ ուսումնական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը:

Վերը նշված թերություններն էականորեն նվազեցնում են ավագ դպրոցականների հնարավորությունները շարժողական ընդունակություններին տիրապետելու ուղղությամբ, իսկ այդ կարողություններն ու հմտությունները կարևոր նշանակություն ունեն ռազմաֆիզիկական պատրաստության գործում:

Այս հանգամանքը, բնականաբար, մանկավարժներին ստիպում է հետազոտել և որոնել ավագ դպրոցականների (ապագա զինակոչիկների) ռազմաֆիզիկական պատրաստության արդյունավետ միջոցներ ու մեթոդներ:

Մինչդեռ ֆիզիկական կուլտուրայի և նախնական զինվորական պատրաստության մի շարք ուսուցիչներ այս կարևոր խնդրի լուծմանը մոտենում են՝ կիրառելով ոչ բոլոր հնարավորությունները: Մասնավորապես, նպատակահարմար է լայնորեն գործածել մարմնամարզության միջոցները, մարմնամարզության դասարանային, արտադասարանական և ինքնուրույն պարապմունքների ձևերը ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության համար (Ю.П.Бойко 1987, Д.И. Воронин, В.А. Кузнецов 2012, С.В. Дмитриев 2014 և այլք):

Մարմնամարզության պարապմունքները կրում են ընդհանուր կրթական բնույթ և բացի ֆիզիկական զարգացումից, նպաստում են ոչ միայն շարժողական պատրաստվածության կատարելագործմանը, այլև բազմաթիվ հոգեկան գործառույթների (ուշադրության, զգոնության, կարգապահության, ինքնատիրապետման, քաջության, վճռականության, դժվարություններն հաղթահարելու կարողության) ձևավորմանը, որը բացառիկ կարևոր նշանակություն ունի դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացում:

Այսպիսով, ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության հիմնական խնդիրների լուծման գործում մարմնամարզությանը պետք է հատկացվի զգալի տեղ:

Մինչդեռ գիտամեթոդական գրականության վերլուծությունը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների աշխատանքի գործնական փորձին ծանոթացումը, ցույց են տալիս, որ ավագ դպրոցականների մարմնամարզության ուսումնական պարապմունքների մեթոդիկական ռազմաֆիզիկական պատրաստության նպատակային ուղղվածության առումով բավականաչափ մշակված չէ: Սա բացատրվում է նրանով, որ ներկայումս գոյություն չունի ավագ դպրոցի երեխաների համար մարմնամարզության կիրառման մեթոդիկայի գիտականորեն հիմնավորված և գործնականում ներդրված համակարգ:

Այդ պատճառով ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության մակարդակի ուսումնասիրությունը և մարմնամարզության միջոցների ու մեթոդների մշակումը, դրանց կիրառման պայմանների բացահայտումը, դառնում են տվյալ հիմնախնդրի մասնակի լուծման հիմքը:

Վերը շարադրվածից հետևում է, որ հետազոտման հիմնախնդիրը բավականին հրատապ է, ունի կարևոր տեսական, գործնական և սոցիալական նշանակություն:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Ավագ դպրոցականների շարժողական պատրաստության տարբեր տեսանկյուններին, այդ թվում ռազմաֆիզիկական պատրաստությանն են նվիրված Վ.Ի.Լյախի (1992-2000), Ֆ.Գ.Ղազարյանի (1981-2008), Ա.Գ.Կապուստինի (2005-2012), Վ.Ս.Կուզնեցովի (2013), Ի.Պ.Զալետանի (2011-2014) և այլ հեղինակների աշխատությունները: Նշված հեղինակները բացահայտում են ֆիզիկական դաստիարակության միջոցների նշանակությունը ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացում: Մինևույն ժամանակ գիտատեխնիկական առաջընթացի ներկա պայմանները, սպառազինության մրցավազքը, առավել բարդ պահանջներ են ներկայացնում ավագ դպրոցականներին (ապագա զինակոչիկներին): Ինչը նշանակում է, որ այս հիմնախնդրի մի շարք կարևոր հարցեր պահանջում են հատուկ տեսական ու գործնական մշակումներ: Այսպես, քիչ են ուսումնասիրված ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության կատարելագործմանն ուղղված մարմնամարզության միջոցների կիրառման մանկավարժական մոտեցումները, հանրակրթական դպրոցների «ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրում բավարար չափով ներկայացված չեն և գրեթե գործնականում չեն կիրառվում շարժումների կոորդինացիայի, ճշգրտության և ճարպկության զարգացմանն ուղղված վարժություններն ու առաջադրանքները: Մինչդեռ հենց այդ շարժողական ընդունակություններն ունեն կարևորագույն նշանակություն ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործում: Հետևաբար դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում կիրառվող մեթոդների ու միջոցների ոչ բավարար մշակվածությունը զգալիորեն դժվարացնում է աշխատանքի արդյունավետ կատարումը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությանը նպատակաուղղված մարմնամարզության ուսումնական պարապմունքների մեթոդիկական պահանջում է էական կատարելագործում: Այս հիմնախնդրի մասնակի լուծմանն է ուղղված ներկայացվող հետազոտությունը:

Հետազոտության օբյեկտ է հանդիսացել ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացը:

Հետազոտության առարկան: Մարմնամարզության միջոցներով ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության բովանդակությունը, պայմանները և մեթոդական մոտեցումները:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացում կմշակվեն ու գործնականում կներդրվեն մարմնամարզության միջոցներ և դրանց կիրառման մեթոդիկական, որոնք կնպաստեն ռազմաֆիզիկական պատրաստության արդյունավետության կատարելագործմանը:

Հետազոտության նպատակը: Մշակել ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության մեթոդիկական մարմնամարզության միջոցներով:

Նպատակը, օբյեկտը, առարկան և աշխատանքային վարկածը որոշել են հետազոտության խնդիրները.

1. ուսումնասիրել հետազոտվող հիմնախնդրի լուսաբանվածության աստիճանը գիտամեթոդական գրականությունում,

2. որոշել ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության մակարդակը,

3. մշակել մարմնամարզության միջոցներով ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությանն ուղղված մանկավարժական մոտեցումներ և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության տեսական մեթոդաբանական հիմք են հանդիսացել այն գիտական սկզբունքներն ու դրույթները, որոնք հաստատված են ընդհանուր մանկավարժությունում և հոգեբանությունում, ֆիզիկական դաստիարակության տեսությունում և մեթոդիկայում, սպորտային մարզումներում, մասնավորապես.

– անձի զարգացման և ձևավորման մեջ գործունեության առաջատար դերի մասին տեսությունը (А.Н.Леонтьев, 1975),

– գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (П.Я.Гальперин 1966, М.М.Боген 1985),

– զարգացնող ուսուցման տեսությունը (В.В.Давыдов 1966, Մ.Ա. Մկրտչյան 2013),

– դպրոցահասակ երեխաների ֆիզիկական դաստիարակության տեսությունը և մեթոդիկան (А.А.Тер-Ованисян 1987, Ф.Г.Казарян 1990, М.Б. Гурцев 2011 և այլք):

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**.

- ուսումնասիրվող հիմնախնդրի ուղղությամբ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, տեսական վերլուծություն և ընդհանրացում,

- հանրապետության ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների առաջավոր փորձի ընդհանրացում,

- հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդներ՝ դիտում, հարցում, զրույց, անկետավորում,

- սովորողների ֆիզիկական պատրաստվածության ստուգողական փորձարկում և թեստավորում,

- հետազոտության փորձարարական մեթոդներ,

- փորձարարական ուսուցում,

- մաթեմատիկական վիճակագրության մեթոդ:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Գիտական որոնումների և տեխնոլոգիական մշակումների արդյունքում հիմնավորվել և փորձարարությամբ հաստատվել են մարմնամարզության

միջոցներով ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության բովանդակությունը և դրանց կիրառման մեթոդիկան:

2. Մշակվել են ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությանն ուղղված մարմնամարզական միջոցներ և դրանց կիրառման մեթոդիկան:

3. Փորձարարությամբ հիմնավորվել է ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացում առաջարկվող մարմնամարզական միջոցների և դրանց կիրառման մեթոդիկայի դրական ազդեցությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը որոշվում է երաշխավորված մարմնամարզական միջոցների, մեթոդների, դրանց կիրառման պայմանների արդյունավետության, ինչպես նաև հետազոտությամբ ստացված արդյունքների տեսական հիմնավորմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը որոշվում է ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության համար մարմնամարզության միջոցների կիրառմանն երաշխավորված մանկավարժական մոտեցումների փորձնական մշակմամբ և դպրոցական պրակտիկայում ներդրմամբ:

Երաշխավորված են կիրառական ուղղվածության մարմնամարզական վարժություններ և միջոցներ՝ ուղղված ավագ դպրոցականների շարժումների կոորդինացիայի, ճշգրտության և ճարպկության ձևավորմանը, որոնք կարևոր նշանակություն ունեն այդ երեխաների ռազմաֆիզիկական պատրաստության, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում լիարժեք ծառայելու համար:

Ատենախոսության նյութերը կարող են կիրառվել ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի և մանկավարժական բուհերի, ռազմական ամբիոնների ուսանողների համար դասախոսությունների և հատուկ դասընթացների պատրաստման ընթացքում, հանրակրթական դպրոցում ֆիզկուլտուրայի դասերին ռազմաֆիզիկական պատրաստության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. Ֆիզկուլտուրայի դասերին մարմնամարզության միջոցներով ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության արդյունավետության ապահովումը պահանջում է ուսուցման գործընթացի հատուկ մշակված համալիր բովանդակություն, ձև և մեթոդիկա (որոնք հանգամանորեն ներկայացվում են ատենախոսությունում):

2. Երաշխավորվող մոտեցումների կիրառումը նպաստում է ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությանն ու կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովված է կատարված աշխատանքի երկարատևությամբ և մասշտաբներով, հետազոտված քանակակազմի բավարար ծավալով, հետազոտման ժամանակակից մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև

փորձարարական նյութի՝ մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով ճշգրիտ, մանրակրկիտ մշակմամբ:

Հետազոտական աշխատանքը կազմակերպվել է միմյանց հետ փոխկապակցված երեք փուլերով.

Առաջին՝ կազմակերպչական փուլը ներառել է 2006-2007 թվականները: Այստեղ սահմանվել է հետազոտության ընդհանուր ուղղվածությունը, մշակվել են հետազոտության կազմակերպման և կառուցման ուղիները, ուսումնասիրվել է հատուկ գիտամեթոդական գրականություն: Այս փուլում ճշգրտվել են հետազոտության առարկան, վարկածը և որոնվել են խնդիրները, ընտրվել հետազոտության մեթոդները, պլանավորվել այն դրույթները, որոնք ներկայացվելու են պաշտպանությանը: Այս շրջանում մշակվել են օրինակելի գծապատկերներ, հետազոտության արդյունքների գրանցման արձանագրություններ:

Երկրորդ՝ փորձարարական փուլն, իր մեջ ներառել է մի շարք արձանագրող և ուսուցանող մանկավարժական փորձարարություններ: Կազմակերպվել և անցկացվել է սոցիոլոգիական հետազոտություն, սահմանվել է ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մասնագիտական բուհերի բարձր կուրսի ուսանողների վերաբերմունքն ուսումնասիրվող հիմնախնդրի հարցերում:

Արձանագրող փորձարարությունների շարքում ուսումնասիրվել է ավագ դպրոցականների ֆիզիկական և շարժողական պատրաստվածության մակարդակը, որոշվել է շարժումների կոորդինացիայի, ճշգրտության, ճարպկության, ուժի, ճկունության և շարժողական այլ ընդունակությունների զարգացման աստիճանը, որը կարևոր նշանակություն ունի ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործում:

Փորձարարական ողջ փուլն ընդգրկել է 2008-2011 թվականների ժամանակահատվածը:

Երրորդ փուլում՝ ընդհանրացնող (2011-2012թթ.), անցկացվել է փորձարարական նյութի վիճակագրական մշակում, հետազոտության արդյունքների տեսական վերլուծություն և ընդհանրացում, շարադրվել է ատենախոսությունը:

Ատենախոսական հետազոտությունը կատարվել է Գյումրիի թիվ 11, 20, 21, 25, 37, (թվով՝ 281 աշակերտ), Վանաձորի թիվ 1, 3, 5, (թվով՝ 254 աշակերտ), Երևանի թիվ 60, 135, 176 (թվով 492 աշակերտ) դպրոցներում 2006-2011 թվականներին: Ուսուցանող մանկավարժական փորձարարությունը անցկացվել է Գյումրիի թիվ 11, 20, 21, 25, 37 դպրոցներում:

Ընդհանուր առմամբ, առաջադրված այս խնդիրների լուծման համար հետազոտությանը մասնակցել են 10-12-րդ դասարանների 32 դպրոցականներ: Նրանցից 16-ը՝ փորձարարական, և 16-ը՝ ստուգողական խմբերում: Սոցիոլոգիական հետազոտություններին մասնակցել են ֆիզիկական կուլտուրայի և ռազմագիտության 120 ուսուցիչներ, մանկավարժական բուհի ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետի բարձր կուրսի 90 ուսանողներ:

Հիմնական տեսական և գործնական դրույթների հավաստիությունը և հիմնավորումը նաև որոշվում են հեղինակի հրատարակումներով, ելույթներով և 2004-2011 թվականների ընթացքում հետազոտության արդյունքների քննարկումներով, դրանք մանկավարժական պրակտիկայում ներդնելու արդյունքներով:

Հետազոտության արդյունքների փորձարկում: Հետազոտության հիմնական դրույթները, փորձարարական նյութը, եզրակացությունները զեկուցվել և քննարկվել են ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնում (2004-2011թթ.) և Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում (2005-2011թթ.): Ատենախոսության թեմայով հրատարակվել են 8 հոդվածներ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսական աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և դպրոցական պրակտիկայում հետազոտությունների ներդրման ակտերից: Աշխատանքը շարադրված է 167 համակարգչային էջով և պարունակում է 13 աղյուսակներ, 25 գծապատկերներ, 156 մատենագիտական աղբյուրներ և 9 հավելված (արձանագրության ձևեր, օրինակելի վարժությունների համալիրներ, հարցաթերթիկներ, ակտեր):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտման թեմայի արդիականությունը, ընդգծված է աշխատանքի նպատակը, սահմանված է հետազոտության վարկածը, առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության խնդիրներն ու մեթոդները, բացահայտված է գիտական նորույթը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Հիմնահարցի դրվածքը, խնդիրները և հետազոտության ուղղվածությունը» գլուխը բաղկացած է 3 ենթաբաժիններից, որտեղ ներկայացրել ենք ավագ դպրոցականների (ապագա զինակոչիկների) ֆիզիկական դաստիարակության համակարգում մարմնամարզության միջոցների դերն ու նշանակությունը: Հիմնավորված է ֆիզիկական պատրաստության ուսումնասիրության տեսանկյունը և անցկացման փուլերը: Ուսումնասիրելով հիմնախնդրի տեսական և գործնական նշանակությունը, մշակվածության աստիճանը՝ կարելի է եզրակացնել.

1. Ուսումնասիրվող հիմնախնդիրն ունի տեսական, գործնական և սոցիալական հույժ կարևորություն:

2. Գիտամեթոդական գրականության և գործնական աշխատանքում խնդիրը գրեթե ուսումնասիրված չէ, ինչը զգալիորեն խոչընդոտում է մարմնամարզության միջոցների արդյունավետ կիրառումը ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացում:

Այս դրույթները հիմնավորեցին ուսումնասիրության հիմնական ուղղվածությունը:

Երկրորդ՝ «Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության ապահովման նպատակով կիրառվող մարմնամարզության միջոցների առանձնահատկությունները» գլխում վերլուծվել է դպրոցական ֆիզիկական կուլտուրա առարկայի ծրագրի մարմնամարզության բաժինը:

- Սոցիոլոգիական հետազոտության միջոցով ուսումնասիրվել է հանրակրթական դպրոցների ուսուցիչների, սովորողների ռազմաֆիզիկական պատրաստության վերաբերյալ տեղեկացվածությունը,
- կատարվել է ավագ դասարաններում մարմնամարզության դասի մանկավարժական վերլուծություն,
- ներկայացվել է ավագ դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստության բնութագիրը և մարմնամարզական վարժություններ կատարելու ունակությունների գնահատումը:

Կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ ֆիզիկական դաստիարակության դպրոցական ծրագրի մարմնամարզության բաժնում բավարար չափով ներկայացված չեն մարմնամարզության այն միջոցները, որոնք ուղղված են ռազմաֆիզիկական պատրաստության այնպիսի որակների զարգացմանը, ինչպիսիք են՝ շարժումների ճարպկությունը և ճշգրտությունը, հաշվի չեն առնվում դրանց կիրառական նշանակությունը:

Սոցիոլոգիական հետազոտության արդյունքները հաստատեցին ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների ոչ բավարար տեղեկացվածությունն ավագ դպրոցականների շարժողական ընդունակությունների զարգացման հարցում մարմնամարզական միջոցների կիրառական դերի վերաբերյալ: Այդ են վկայում նաև մարմնամարզության դասերի վերլուծությունների արդյունքները, որոնք որոշ չափով հնարավորություն են տալիս բացատրել ավագ դպրոցականների ֆիզիկական պատրաստության, շարժումների կոորդինացիայի, ճշգրտության և ճարպկության զարգացվածության, հավասարակշռության պահպանման, ինչպես նաև դպրոցական ծրագրով նախատեսված մարմնամարզական վարժությունների կատարման ունակությունների համեմատաբար ցածր մակարդակը: Այսպես, փորձարարության (1027) մասնակիցների մոտ 53% առաջ թեքվելուց չեն կարողացել դիպչել ոտնաթաթերին, 16,8 % չեն կարողացել գոնե մեկ անգամ ձգվել, իսկ 71,2%՝ (731 աշակերտ) կարողացել են կատարել ձգումներ, միջինը՝ 3-4 անգամ: Ավագ դպրոցականների ավելի քան 61% չեն հաղթահարել շարժումների կոորդինացիայի, ճշգրտության և ճարպկության թեստերի պահանջները: Փորձարկվողների զգալի մասը՝ 41,9%, դպրոցական ծրագրով մարմնամարզական վարժությունների կատարման համար կամ «անբավարար» գնահատական են ստացել կամ ընդհանրապես չեն կարողացել կատարել դրանք:

Վերոնշյալ արդյունքները որոշեցին բացահայտված խնդիրների լուծման նպատակով հատուկ մանկավարժական մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

Երրորդ՝ «Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացում մարմնամարզական միջոցների կիրառման արդյունավետության փորձարկման հիմնավորումը» գլխում՝ տեսական և գործնական ուսումնասիրությունների, մշակումների հիման վրա ներկայացված են ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությանն ուղղված մարմնամարզական վարժությունների գործածման հիմնական ուղիները:

Անցկացված ուսուցողական մանկավարժական փորձարարության արդյունքները համոզաբար ցույց են տալիս ավագ դպրոցականների (ապագա զինակոչիկների) ֆիզիկական պատրաստվածության վրա մարմնամարզության միջոցների և նրա կիրառական ուղղվածության դրական ազդեցությունը: Այդ նպատակով կազմակերպվել է միամյա ուսուցողական փորձարարություն, որին մասնակցել են բարձր դասարանների 32 սովորողներ՝ 16-ը՝ փորձարարական, 16-ը՝ ստուգողական խմբերում:

Փորձարկվողներն, ըստ իրենց տարիքի, ֆիզիկական պատրաստության մակարդակի և մարմնամարզական վարժություններ կատարելու ընդունակությունների, եղել են գրեթե նման: Պատանիները փորձարարական խմբում պարապել են մեր կողմից առաջարկված մարմնամարզության միջոցների կիրառական ուղղվածության օրինակելի ծրագրով: Դրանք մեր կողմից հատուկ ընտրված, մշակված և համակարգված ընդհանուր զարգացնող վարժություններ են՝ առարկաներով և առանց առարկաների, կիրառական վարժություններ, վարժություններ մարզագործիքների և մարզասարքերի վրա:

Մենք կարևոր տեղ ենք հատկացրել նաև սովորողների մանր մոտորիկայի զարգացմանը, քանի որ ձեռքերի մատների արագ և ճիշտ շարժումներից մեծապես կախված է ապագա զինակոչիկի հատուկ պատրաստությունը: Այդ կարողություններն ու հմտությունները շատ կարևոր են զենքը քանդելու և հավաքելու, տարբեր տեսակի զինամթերքի հետ հատուկ գործողություններ կատարելու համար (փամփուշտներ, ականներ և այլն): Ստուգողական խմբում՝ մարմնամարզության պարապմունքներն անցկացվել են ըստ ընդունված մեթոդիկայի և գոյություն ունեցող ծրագրի (2007թ.):

Այսպես, մինչև միամյա ուսուցողական մանկավարժական փորձարարության անցկացումը շարժողական պատրաստվածության մակարդակը երկու հետազոտվող խմբերում համեմատաբար ցածր է եղել: Սա արտահայտվել է ինչպես ճկունության, ուժի, արագաշարժության ցուցանիշներում, այնպես էլ հավասարակշռության, շարժման ճարպկության հանձնարարությունների կատարման մեջ և այլն: Օրինակ, ողնաշարի ճկունության զարգացման մակարդակը որոշելիս (թեքում առաջ) հաստատվել է, որ 32 փորձարկվողների մոտ միջին ցուցանիշը կազմում է - 2,25սմ, այսինքն՝ պատանիները մինչև զրոյական նիշը չեն թեքվել 2,25սմ:

Ցածր ցուցանիշներ են գրանցվել նաև վեր ձգումների, արագաշարժության, հավասարակշռության պահպանման վարժություններ կատարելիս: Այստեղ սովորողները միջինում 3 անգամ են կարողացել ճիշտ ձգվել, 30 մետր վազքատարածությունն անցել են 5,2 վայրկյանում, մեկ ոտքի վրա կարողացել են կանգնել 6,5 վայրկյան: Երկու հետագոտվող խմբերի ավագ դպրոցականների մոտ բավականին ցածր արդյունքներ են գրանցվել նաև շարժումների կոորդինացիայի, ճշգրտության, ճարպկության հանձնարարություններ կատարելիս:


Այս պատկերը կտրուկ փոխվել է ուսուցողական մանկավարժական փորձարարության անցկացումից հետո: Այսպես, համեմատած մինչ փորձարարական տվյալների, ողնաշարի ճկունության զարգացման մակարդակը փորձարարական խմբում աճել է մինչև 7,3սմ: Այս խմբի փորձարկվողներն առաջ թեքվելիս դաստակն իջեցնում էին զրոյական նիշից ներքև 7,3սմ (աղյուսակ 1): Այն դեպքում, երբ ստուգողական խմբում նույն ցուցանիշը կազմում էր ընդամենը 1,1սմ: Նույնպիսի դրական արդյունքներ ուսուցողական փորձարարությունից հետո փորձարարական խմբի դպրոցականների մոտ դրսևորվել են նաև շարժողական պատրաստվածության այլ հանձնարարությունների դեպքում:

Աղյուսակ 1

Մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում փորձարկվողների շարժողական պատրաստության ցուցանիշների փոփոխությունները

Ցուցանիշներ	Փորձարարական խումբ n-16		Ստուգողական խումբ n-16	
	մինչ փորձը	փորձից հետո	մինչ փորձը	փորձից հետո
	$\bar{x} \pm m$	$\bar{x} \pm m$	$\bar{x} \pm m$	$\bar{x} \pm m$
Ճկունություն (թեքում առաջ) սմ	-2,2±0,05	7,3±0,10	-2,3±0,07	1,1±0,04
Մկանային ուժ (ձգում / անգամ)	3±0,07	8±0,03	3±0,15	4±0,2
Արագաշարժություն (վազք՝ 30մետր վրկ.)	5,2±0,3	4,3±0,05	5,1±0,01	4,7±1,0
Հավասարակշռության պահպանում (վրկ.)	6,5±0,19	9,7±0,2	6,3±0,04	7,2±0,8
Շարժումների կոորդինացիա (միավոր)	3,7±0,21	8,8±0,21	3,8±0,2	4,2±0,09
Շարժումների ճշգրտություն 45 աստիճան 135 աստիճան	7,3±0,09	2,2±0,07	7,1±0,2	6,8±0,18
	13,8±0,27	3,9±0,23	13,6±0,19	11,4±0,17
Շարժումների ճարպկություն (վրկ.)	16,2±0,3	12,4±0,15	16,0±0,4	14,1±0,3


Բացահայտելով ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործընթացում մարմնամարզական վարժությունների կիրառական ուղղվածությունը ցույց է տրված, որ այդ ուղղվածության հիմքը կազմում են ինչպես մարմնամարզության ընդհանուր խնդիրները և ուղղորդված ազդեցության միջոցները (ընդհանուր-ամրապնդող, շարժումների կոորդինացիան, ճշգրտությունը, ճկունությունը, ճարպկությունը զարգացնող վարժությունները), այնպես էլ մարմնամարզությամբ պարապելու ձևերը՝ մարմնամարզություն մինչ պարապմունքները, ինքնուրույն պարապմունքներ, պարապմունքներ մարզական սեկցիաներում և այլն (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությունը մարմնամարզության միջոցներով

Հայտնի է, որ դպրոցահասակ երեխաների, հատկապես ավագ դպրոցականների մոտ կոորդինացիայի և շարժումների ճշգրտության

զարգացումը պայմանավորված է որոշակի դժվարություններով: Այդ իսկ պատճառով ավագ դպրոցականների (ապագա զինակոչիկների) ռազմաֆիզիկական պատրաստության համակարգում մենք առաջարկում ենք ներառել հատուկ վարժությունների և հանձնարարությունների համալիր՝ շարժումների ճշգրտության, կոորդինացիայի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Օրինակելի վարժություններ՝ ուղղված ավագ դպրոցականների շարժումների կոորդինացիայի և ճշգրտության զարգացմանը

Այս գլխում նաև տրված է ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության վրա երաշխավորված մարմնամարզական միջոցների ազդեցության արդյունավետության փորձարարական հիմնավորումը: Այդ են վկայում անցկացված ուսուցանող մանկավարժական փորձարարության

արդյունքները, նշված է մկանային ուժի, արագաշարժության, արագաուժային ընդունակությունների ցուցանիշների զգալի աճ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հետազոտվողների ֆիզիկական պատրաստության ցուցանիշների փոփոխությունը մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում

Ցուցանիշներ	Փորձարարական խումբ n=16		Ստուգողական խումբ n=16	
	Մինչ փորձը	փորձից հետո	Մինչ փորձը	փորձից հետո
	$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$
Մկանային ուժ (ձգում անգամ)	$3 \pm 0,07$	$8 \pm 0,03$	$3 \pm 0,15$	$4 \pm 0,02$
Արագաշարժություն (վազք՝ 30 մ/վրկ.)	$5,2 \pm 0,3$	$4,3 \pm 0,05$	$5,1 \pm 0,1$	$4,7 \pm 0,04$
Արագաուժային պատրաստություն (հեռացատկ, մ)	$4,2 \pm 0,13$	$5 \pm 0,19$	$4,3 \pm 0,08$	$4,8 \pm 0,03$
Դիմացկունություն (վազք՝ 1000 մ/րոպե)	$4,2 \pm 0,02$	$3,4 \pm 0,05$	$4,25 \pm 0,03$	$3,55 \pm 0,04$

Այսպիսով, ուսուցանող մանկավարժական փորձարարության արդյունքները, որոնք ներկայացված են տվյալ գլխում, փաստում են, որ երաշխավորված մանկավարժական մոտեցումները և դրանց կիրառման պայմանները դրականորեն են ազդում ավագ դպրոցականների (ապագա զինակոչիկների) ֆիզիկական պատրաստության և շարժողական ընդունակությունների զարգացման վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտվող հիմնախնդրի ուղղությամբ հատուկ գիտամեթոդական գրականության, ավագ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության դրվածքի ուսումնասիրությունը և կատարված աշխատանքի արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությունը դպրոցականների ֆիզիկական դաստիարակության ամբողջ համակարգի կարևոր բաղկացուցիչ մասն է: Մինչդեռ այս հիմնախնդրի մի շարք հարցերի լուծման համար ոչ միշտ են կիրառվում ֆիզիկական դաստիարակության բոլոր միջոցները: Մասնավորապես, մինչ օրս մարմնամարզության միջոցները լայն կիրառություն չեն գտել այս կարևոր խնդրի լուծման գործում: Հիմնախնդրի տեսական և գործնական ոչ բավարար մշակվածությունը զգալիորեն դժվարացնում է ֆիզիկական կուլտուրայի և նախնական զինվորական

պատրաստության ուսուցիչների աշխատանքն ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության ուղղությամբ:

2. Մոցիոլոգիական հետազոտություններով բացահայտվել է, որ հարցմանը մասնակցած ուսուցիչների և մասնագիտական բուհերի բարձր կուրսի ուսանողների ճնշող մեծամասնությունն ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործում մարմնամարզական միջոցների կիրառումը համարում է կարևոր: Նրանց 75%-ը բացեիքաց ընդունում է այս հարցի խոցելի դրվածքը հանրակրթական դպրոցներում, իրենց ոչ լիարժեք պատրաստվածությունը մարմնամարզության միջոցների կիրառմամբ ռազմաֆիզիկական պատրաստության նպատակային ուղղվածության դասեր անցկացնելու համար: Հիմնական պատճառների թվում նրանք նշել են թերի իրազեկությունը մարմնամարզության միջոցներով ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության առանձնահատկությունների ուղղությամբ, մասնագիտական գրականության, մեթոդական մշակումների, նաև գործնական երաշխավորությունների բացակայությունը, որոնք կօգնեն ֆիզիկական կուլտուրայի և նախնական զինվորական պատրաստության ուսուցիչներին տվյալ քանակակազմի սովորողների համար ավելի արդյունավետ ուսումնական պարապմունքների կազմակերպմանն ու անցկացմանը:

3. Ցույց է տրվել, որ ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստության գործում մարմնամարզության միջոցների կիրառման մոտեցումների տեսական և գործնական ոչ բավարար մշակվածությունը, մարմնամարզության միջոցների կիրառման առանձնահատկությունների մասին ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների տեղեկացվածության ցածր մակարդակը հանգեցնում են նրան, որ մարմնամարզական վարժությունների բազմազանությունը, դրանց կիրառման պայմանները, հիմնական միջոցներ չեն հանդիսանում սովորողների ռազմաֆիզիկական պատրաստության հարցերի լուծման գործում:

4. Ատենախոսությունում ներկայացված է ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստությանն ուղղված մարմնամարզական միջոցների և դրանց կիրառման ուղղվածությունը.

- մարմնամարզական միջոցների ընդհանուր-ամրապնդող, կանոնավորող և շտկողական ուղղվածություն,

- մկանային ուժի, շարժումների կոորդինացիայի, ճշգրտության և ճարպկության, հավասարակշռությունը պահպանելու ունակության զարգացմանն ուղղված մարմնամարզական վարժությունների կիրառում,

- հատուկ խնդիրների լուծման համար մարմնամարզության միջոցների կիրառական ուղղվածություն,

- մարմնամարզության միջոցների ռազմաֆիզիկական ուղղվածություն:

5. Վերը նշված բոլոր ուղղություններով ընտրված, մշակված և համակարգված են ուսումնական նյութեր, բովանդակություն, վարժություններ, հանձնարարություններ և կիրառման պայմաններ՝ ավագ դպրոցականների

ռազմաֆիզիկական պատրաստության համար: Ատենախոսությունում հիմնավորված են դրանց կիրառման մեծ հնարավորությունները:

6. Միամյա մանկավարժական փորձարարությունում երաշխավորված, մարմնամարզության միջոցների և մեթոդների, դրանց կիրառման պայմանների կատարումը ֆիզիկական կուլտուրայի դասերին ավագ դպրոցականներին հնարավորություն է տալիս հասնել դրական արդյունքների.

- համեմատած մինչ փորձարարական տվյալների հետ՝ բարելավվել են ֆիզիկական պատրաստվածության ցուցանիշները. մկանային ուժի՝ 5 անգամ, արագաշարժության՝ 0,9 վայրկյան, արագաուժային՝ 80 սմ և այլն:

- մանկավարժական փորձարարության վերջում փորձարարական խմբի փորձարկվողները գրեթե անսխալ են կատարել շարժումների կոորդինացիայի, ճշգրտության և ճարպկության, հավասարակշռության ստատիկ պահպանման վարժություններն ու հանձնարարությունները՝ ողնաշարի սյան ճկունությունը բարելավվել է 5,1 սմ-ով, շարժումների ճարպկությունը՝ 3,8 վայրկյանով, հավասարակշռության պահպանումը՝ 3,2 վայրկյանով և այլն:

Անցկացված հետազոտությունների արդյունքները փաստում են ավագ դպրոցականների ռազմաֆիզիկական պատրաստվածության համար երաշխավորված մոտեցումների արդյունավետության մասին: Ասվածը հաստատվում է հանրակրթական դպրոցի ավագ դպրոցականների ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում մարմնամարզության երաշխավորված միջոցների ներդրմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի՝ հրատարակված հետևյալ աշխատանքներում

1. Աղանյան Գ.Վ. Ավագ դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի հետազոտում: Հանրապետական XXXIII գիտամեթոդական կոնֆերանսի նյութերի ժողովածու: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, 2006, էջ 18-21:

2. Աղանյան Գ.Վ. Զինղեկների և ֆիզկուլտուրայի ուսուցիչների աշխատանքների սոցիոլոգիական ուսումնասիրություն: Հանրապետական գիտական նստաշրջան: Նվիրվում է ՀՀ անկախության 15 ամյակին: Նյութերի ժողովածու: Գյումրի: Դպիր, 2007, էջ 357-359:

3. Աղանյան Գ.Վ. Ռազմամարզական խաղերի դերը ավագ դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Հանրապետական գիտական նստաշրջան: Նյութերի ժողովածու: Գյումրի, Դպիր, 2008, էջ 284-286:

4. Աղանյան Գ.Վ. Հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում մարմնամարզության դասի մանկավարժական վերլուծությունը: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: ԳՊՄԻ, 4-5 դեկտեմբերի 2008, Պրակ 1, Գյումրի: Դպիր, 2009, էջ 330-333:

5. Աղանյան Գ.Վ. Ռազմամարզական խաղերի դաստիարակչական և կրթական հնարավորությունները որպես դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցներ: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: Նվիրվում է ԳՊՄԻ հիմնադրման 75-ամյակին: ԳՊՄԻ, 9-10 հոկտեմբերի, 2009, Գյումրի Դպիր, էջ 216-219:
6. Աղանյան Գ.Վ. Ավագ դպրոցականների՝ ապագա զինակոչիկների շարժողական պատրաստվածության զարգացման վրա մարմնամարզական վարժությունների ազդեցության հետազոտություն: Մանկավարժական միտք 3-4, 2011, էջ 132-138:
7. Աղանյան Գ.Վ. Մարմնամարզությունը որպես ավագ դպրոցականների ապագա զինակոչիկների ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոց: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: ԳՊՄԻ 28-29 նոյեմբերի Գյումրի 2012, էջ 427-430:
8. Աղանյան Գ.Վ., Ղարաքեշիշյան Ռ.Ա. Ավագ դպրոցականների (ապագա զինակոչիկների) հարմարվողականության խնդիրները զինվորական ծառայությունում: Հանրապետական ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր: ԳՊՄԻ 26.04.2013, Երևան, գրական էտալոն 2014, էջ 257-260:

ОСОБЕННОСТИ ВОЕННО-ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ СТАРШЕШКОЛЬНИКОВ НА ПРИМЕРЕ ГИМНАСТИКИ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – “Методика преподавания и воспитания” (физическая культура).

Защита состоится 30 апреля 2015 г. в 12⁰⁰ часов на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 1.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Известно, что в системе физического воспитания школьников важное место должно отводиться их физической подготовленности, в том числе и военно-физической подготовке. Однако многие вопросы этой проблемы и сегодня требуют теоретической и практической разработки (И. П. Залетаев, 2005; В. С. Кузнецов, 2010; Л. М. Гришин, 2014 и др.). Так, недостаточно разработаны средства гимнастики в системе военно-физической подготовки старшеклассников, почти не охвачены в школьной программе и не реализуются на практике упражнения и задания, направленные на развитие координации, точности и ловкости движений. Тогда как, именно эти двигательные умения имеют важное значение в деле развития военно-физической подготовки старшеклассников.

В системе военно-физической подготовки учащихся старших классов недостаточное внимание уделяется и прикладной направленности гимнастических упражнений. Недостаточная разработанность средств и методов их использования в процессе физического воспитания старшеклассников также затрудняет эффективное проведение учебной работы по развитию военно-физической подготовки у этих учащихся. Таким образом, становится очевидным, что методика учебных занятий по гимнастике со старшеклассниками с целевой направленностью на развитие военно-физической подготовки требует значительного совершенствования. Этим прежде всего и определяется актуальность настоящего исследования, ее теоретическая и практическая значимость.

Цель исследования – разработать средства и методы применения гимнастических упражнений для развития военно-физической подготовки у учащихся старших классов.

Задачи исследования

1. Изучить степень освещённости исследуемой проблемы в научно-методической литературе.
2. Определить уровень развития физической подготовки у учащихся старших классов.
3. Разработать педагогические подходы развития военно-физической подготовки у старшеклассников средствами гимнастики и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна экспериментальной разработкой гимнастических средств и методики их применения для развития военно-физической подготовки старшеклассников.

Теоретическая значимость исследования определяется теоретическим обоснованием эффективности применения рекомендованных средств и методов гимнастики, условий их применения для развития военно-физической подготовки старшеклассников, а также полученных результатов исследования.

Материалы диссертационного исследования в определённой степени дополняют новыми сведениями теорию и методику физического воспитания учащихся старших классов.

Практическая значимость диссертационной работы заключается в экспериментальной разработке и внедрении в школьную практику рекомендованных педагогических подходов применения средств гимнастики в развитии военно-физической подготовки старшеклассников. Рекомендованы гимнастические упражнения как прикладной направленности, так и на формирование координации, точности и ловкости движений, имеющих важное значение для развития военно-физической подготовки учащихся старших классов.

Апробация результатов исследования. Основные положения, результаты и выводы исследования докладывались и обсуждались на научных конференциях, заседаниях кафедры теории и методики физического воспитания Арм ГИФК (2004-2011 г.) и на кафедре физического воспитания и методики его преподавания Гюмрийского педагогического института им. М. Налбандяна (2005-2011 гг.). По теме диссертации опубликовано 8 статей.

Структура и объём диссертации. Диссертационная работа изложена на 166 страницах компьютерного текста и состоит из введения, трёх глав, выводов, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 13 таблиц, 25 рисунков и 9 приложений.

THE PECULIARITIES OF MILITARY-PHYSICAL TRAINING OF HIGH SCHOOL CHILDREN ON THE EXAMPLE OF GYMNASTICS

Thesis for the degree of Candidate of Pedagogy, speciality 13.0002 “Methods of Teaching and Education (Physical Training)”

The defence of the thesis will be held 12⁰⁰, April 30, 2015, at the session of Special Board 020 HAC (Higher Attestation Commission) for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: 17 Tigran Mets avenue, 0010, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. It is well-known that within the system of school-children's physical education special attention should be paid to their physical preparedness as well as to their military-physical training. But some issues of this problem even today need some theoretical and practical elaboration. (I. P. Zaletayev, 2005; V. Ye. Kuznetsov, 2010; L. M. Groshin, 2014, etc.) For instance, the following are not properly elaborated, i.e. the methods and techniques of gymnastics in the system of high-school pupils' military-physical training. There are exercises and tasks aiming at the coordination, exactness and dexterity of motions included in the school programme and are hardly practically realized. Whereas it's these motion abilities that are of vital importance for military-physical training of high-school pupils.

Insufficient attention is paid to the practical orientation of gymnastic exercises in the system of military-physical preparedness of high-school pupils. Insufficient elaboration of means and methods of application in the process of physical education of high school pupils make difficult the efficient implication of study work aimed at the development of military-physical preparedness of these pupils. Thus, it becomes obvious that the methods of lessons in gymnastics for high school pupils need to be improved.

First of all, it is this reason that motivates the actuality of the research, its theoretical and practical significance.

The aim of the research is to work out means and methods of application of physical exercises for the development of military-physical preparedness of high-school children.

The objectives of the research are:

1. To analyze the degree of interpretation of the studied problem in the scientific-methodological literature.

2. To determine the degree of the development of physical training of high school pupils.
3. To work out pedagogical approaches to the development of the military-physical training of high school pupils by means of gymnastics and to prove their effectiveness experimentally.

The scientific novelty of the research is defined by all-around study of the problems related to the development of military-physical training of the high-school pupils and, on this basis, the elaboration of pedagogical approaches to the application of means and methods of training for the improvement of organization of this work.

The theoretical significance of the research is defined by the theoretical motivation of the effectiveness of the use of the recommended means and methods of gymnastics, the conditions of their application for the improvement of the military-physical training of senior school-children as well as the results gained during the research.

The materials of the dissertation research may, to a definite extent, enrich the theory and methods of physical training of high-school pupils with new information.

The practical significance of our thesis is in the experimental elaboration and inclusion in the school practice of the recommended pedagogical approaches in the application of gymnastics for the improvement of the military-physical training of high-school pupils. Gymnastic exercises of applied orientation are recommended which will also contribute to the formation of the coordination, exactness and dexterity of high-school pupils motions, which is very important for the development of the military-physical training of these students.

The approbation of the results of the research.

The main issues, results and conclusions of the research have been reported and discussed at scientific conferences, meetings of the chair of the theory and methods of physical training at the Armenian State Institute of Physical Training (2004-2011) and at the Chair of Physical Education and Methods of its Teaching at Gyumri State Pedagogical Institute after M. Nalbandyan (2005-2011). 8 articles have been published on the topic of the present thesis.

The structure of the thesis dissertation.

The thesis is stated on 166 pages of computer text, and consists of the introduction, 3 chapters, conclusions, references and appendices. The dissertation includes 13 tables, 25 pictures and 9 appendices.